ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Տաթևիկ Խաչատրյան, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2023թ. հունիսի 4-ից 10-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (ԳՐԵԿՈ):

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ԳՐԵԿՈ-ի 94-րդ լիագումար նստաշրջանին:

Քննարկված թեմաները՝ կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը բարձրագույն իշխանական մարմիններում (գործադիր մարմին) և իրավապահ մարմիններում, Էստոնիայի, Լեհաստանի, Կիպրոսի, Հյուսիսային Մակեդոնիայի, Միացյալ Թագավորության, Նիդերլանդների, Շվեդիայի, Չեխիայի, Ռումինիայի ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի համապատասխանության 2-րդ զեկույցներ, Ավստրիայի, Անդորրայի, ԳՐԵԿՈ-ի գնահատման 4-րդ փուլի 2-րդ համապատասխանության զեկույց, Թուրքիայի գնահատման 4-րդ փուլի միջանկյալ զեկույց և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) հրավերով ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Տաթևիկ Խաչատրյանը 2023թ. հունիսի 4-ից 10-ը մասնակցել է ԳՐԵԿՈ-ի 94-րդ լիագումար նիստերին (այսուհետ՝ նիստեր):

Նիստերի շրջանակում Տաթևիկ Խաչատրյանը Շվեյցարիայի հետ համատեղ հանդես է եկել որպես Էստոնիայի գնահատման զեկուցող, քանի որ Հայաստանը հանդիսանում է Էստոնիայի գնահատման 5-րդ փուլի գնահատող երկիր: Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել է Էստոնիայի ձեռքբերումները ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի ընթացքում և իրականացրած բարեփոխումները, որի արդյունքում Էստոնիայի 5-րդ փուլի գնահատման փուլի համապատասխանության 2-րդ զեկույցն ընդունվել է անդամների համաձայնությամբ և արդեն հրապարակվել է:

Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է նաև Լեհաստանի, Կիպրոսի, Հյուսիսային Մակեդոնիայի, Միացյալ Թագավորության, Նիդերլանդների, Շվեդիայի, Չեխիայի, Ռումինիայի ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի համապատասխանության 2-րդ զեկույցների ընդունման ընթացքում տեղի ունեցած քննարկումներին և քվեարկել է վերջիններիս ընդունման օգտին:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման
և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ

Տաթևիկ Խաչատրյան

15.06.2023թ.